ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

01128.1/1460-2025

No 192-Հ/2 «21» հունվարի 2025 թ.

«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ (ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ)» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ՝ 042101.00.6-«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ՝ 042101.01.6-«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ, ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ՝ 101401.00.7-«ՍՊՈՐՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ՝ 101401.02.7-«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ (ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ)» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 1074-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԵՐԴԻՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կրթության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված N 17 և N 19 հավելվածների 3-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության (միջկառավարական համաձայնագիր)» բակալավրի կրթական ծրագրով, ուսուցման գրական հայերեն լեզվով, առկա ուսուցմամբ, ուսուցման 4 տարի տևողությամբ՝ 042101.00.6-«Իրավագիտություն» մասնագիտության 042101.01.6-«Իրավագիտություն» կրթական ծրագրով՝ ըստ կուրսերի սովորողների սահմանային 60-ական տեղերի թվերը 30-ականով ավելացնել և Հայաստանի Հանրապետության կրթության և

Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարան

գիտության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 4-ի ««Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության /համաձայն միջկառավարական համաձայնագրի/» բարձրագույն մասնագիտական կրթության N 264 լիցենզիան բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի իրականացման լիցենզիաներով փոխարինելու՝ վերաձևակերպելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2004 թ. մարտի 15-ի N 121-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1074-Ա/Ք հրամանի 1ա հավելվածի 9-րդ կետի 9.1-րդ ենթակետում՝ «60» թվերը փոխարինել «90» թվերով և տրամադրել լիցենզիայի հերթական ներդիր:

2. «Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատությանը (միջկառավարական համաձայնագիր)» տալ մագիստրոսի կրթական ծրագրով, ուսուցման գրական հայերեն լեզվով, առկա ուսուցմամբ, ուսուցման 1 տարի տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների սահմանային 10 տեղով՝ 101401.00.7-«Սպորտ» մասնագիտության՝ 101401.02.7-«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)» կրթական ծրագրով գործունեության թույլտվություն և լիցենզիայի հերթական ներդիր:

3. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչության պետ Ա. Արշակյանին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Սվաջյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

1/21/2025

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169